



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1884 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Ի.

17 ԱՊՐԻԼ 1885




Կ. ՊՕԼԻՍ

1885

# ԴԻԻՍՆԻՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

## ՄԱՅՐ ԳԻԻՍՆ

Տիգրան	Էֆէնտի	Եռսուֆեան	Ա. Արենդեր
Քրիստոստուր	»	Ղաղարոսեան	Բ. »
Յովհաննէս	»	Թորոսեան	Գ. »
Յակոբ	»	Պօշնակեան	Ա. Արենդեր
Ստեփան	»	Տամատեան	Բ. »
			Գ. »



### Ձեռննասութեան Դիւան

Մատթէոս Եսկ. Խղմիրեան Արենդեր  
Գարեգին Վրդ. Թաթարեան  
Մարկոս Էֆէնտի Աղաբէգեանց

### Դաստիարակութեան Դիւան

Ռէթէոս Էֆ. Պէրպէրեան Արենդեր  
Գէորգ » Ապուլլաս  
Միքայէլ » Մամիկոնեան

### Կարեւոր Դիւան

Քրիստոս. Էֆ. Ղաղարոսեան Արենդեր  
Յակոբ » Եէմէնիճեան  
Պօղոս » Թորգոմեան

### Համարակարգութեան Դիւան

Կարապետ Էֆ. Սըվաճեան Արենդեր  
Մկրտիչ » Ճանըմեան  
Գրուհիկ » Յովակիմեան

### Յնորոշութեան Դիւան

Յովհաննէս Էֆ. Թորոսեան Արենդեր  
Ռուբէն » Պուլկուրեան  
Վիշէն » Օրմանեան

### Իրաստութեան Դիւան

Գարրիէլ Էֆ. Նորատունկեան Արենդեր  
Յովհաննէս ՔՆՅ. Մկրեան  
Յակոբ Էֆէնտի Արշակ

### Նախաձեռնութեան Դիւան

Մինաս Էֆէնտի Չերաղ Արենդեր  
Յովհաննէս » Արշակունի  
Նշան » Պօյաճեան

### Իմբացրութեան Դիւան

Կարապետ Էֆ. Խլթիւճեան Արենդեր  
Հաբարձուժ » Ալաճաճեան  
Յակոբ » Գուրգէն

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄՆ 1884 ԱՄԻ

ՆԻՍՏ Ի.

17 ԱՊՐԻԼ 1885

ՆԱԽԱԳԱՀ. — Պատրիարքական Տեղապահ Ս. Հայր.  
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի ԵՈՒՍՈՒՖԵԱՆ.

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. — Ատենական դործողութիւնք.
- Բ. — Ուխտ նորընտիր Ամեն Ս. Պատրիարք Հօր.
- Գ. — Փակումն նստաշրջանի 1884 ամի.

Ազգային Երեսօխանական Ժողովն այսօր գումարեցաւ Մայր-Եկեղեցւոյ Գում-Գարուի, նորընտիր Ամեն Ս. Պատրիարք Հօր Սահմանադրական ուխտն լսելու և 1884 ամի նստաշրջանը փակելու համար :

Ատենը բացուեցաւ ժամ 4ին ընդ նախագահութեամբ Պատրիարքական Տեղապահ Ս. Հօր և Ատենապետութեամբ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Տիգրան էֆէնտի : — Ներկայ Երեսօխանացի թիւն էր 81 : Վարչութեան կրօնական և Բաղարկական Ժողովաց անդամք խմբովին հաւորած էին իրենց յատուկ սեղանին շուրջն :

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԵՐ

Բացակայութիւնք

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Թ. — Իբր ատենական գործողութիւն՝ Գիւանիս վրայ երեք գրութիւններ

կան Ժողովոյը ներկայելիս Առաջինն է՝ Ֆէլէկեան Սիման էֆէնտի մէկ նամակն, որով կարծճամբորդութեամբ մը ժողովոյս մէկ բանի նիստերէն բացակայ մնալն կը ծանուցանէ. երկրորդն է՝ Ղազարտեան Քրիստոստուր էֆէնտի կողմանէ՝ որ իւր ծանուցեալ հիւանդութիւնն յայտնելով, կը խնդրէ միանգամայն Մայր-Գիւանէս սը յետ ուխտի Սրբազան Պատրիարք Հօր՝ հաճի իւր շնորհատրութիւններն ալ մատուցանել առ Նորին Սրբազնութիւնն. երրորդ զիրն է Կիրճեան Կարապետ էֆէնտի կողմանէ՝ որ ի պատասխանի Մայր-Գիւանէս առ ինքն ուղղեալ ղեկուցագրոյն՝ յոյս կը յայտնէ թէ ի մտոյ բժշկուելով, սխտի կարենայ մասնակցիլ Ժողովոյս աշխատութեանց :

Կարծեմ Ժողովոյս ուրիշ բան չ'մնար ընել, եթէ սչ այն երեք բացակայութիւններն ևս՝ իբր օրինակն՝ որճանադրել ի Տուամորի ներկայութեան :

Ժողովն ընդունելով Ատենապետ Էֆէն-  
տիի առաջարկութիւնն, ըստ այնմ, ԿՈՐՈՇէ  
այն երեք բայտկայութիւններն իբր օրինական  
արձանագրել էր տուժարի ներկայութեան :

Բ .

Ուխտ նորոգութիւն Ամեն. Սրբազան Պատ.  
րիապր Հօր .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիտէք, Տէաքք, թէ  
Ժողովոյս այս աւուր զուժարման նպատակն է  
նորընտիր Ս. Պատրիարք Հօր Սահմանադրա-  
կան ուխտն ըսել և վասիել 1884ի նստաշրջանն :

Այլ յառաջ բան որ և իյէ զորոնորութիւն,  
պարտք կը համարիմ յիշեցնել ձեզ այն արժա-  
նավայել մեծարանքն ու պատիւները զորս մեր  
նորընտիր Սրբազան Պատրիարք Հայրն Երաւ-  
տաղիմէն Մայրաքաղաքս եկած ժամանակ իւր  
ճամբուն վրայ գտաւ ամենուրեք, ո՛չ միայն  
մեր ազգայնոց և տեղական իշխանութեանց  
կողմէ, այլ և մեր այլալիսն հայրենակցաց, և  
մանաւանդ Յունաց կողմէ, որք սիրալիր մե-  
ծարանօք պատուաւիրեցին զՆորին Սրբաշնու-  
թիւնն : Այս պատիւներ բնականաբար Ազգին  
կը պատկանին, ուստի և մեզ համար քաղցր  
պարտականութիւն մ'է այս առթիւ յատենի  
Ժողովոյս մեր շնորհակալութիւններն յայտնել  
արտօնապարտած մեծարանաց և պատիւներուն  
համար և յետոյ անցնել Օրակարգին :

( Հաւանութեան ցոյցերով Ժողովն կը յայտա-  
նէ իւր շնորհակալիքը : )

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — ( Շարունակելով )  
Ամեն Ս. Պատրիարք Հայրն, Տէաքք, այս  
պահուս յ'Երուտաղիմատուն կը գտնուի, և  
ըստ օրինի՛ հարկ է որ Ժողովոյս կողմանէ կար-  
գեալ պատգամաւորութիւն մը երթնայ անդ և  
հրաւիրէ զՆորին Բարձր Սրբաշնութիւն ի ծո-  
ղով :

Գիւտնս պատշաճ կը համարի այն ցրտա-  
զամաւորութիւն կազմել Կրօնական և Քաղա-  
քական Ժողովոյ Գիւտններէն և Ազգային ծո-  
ղովոյս կողմանէ ընկերանոց այն պատգամա-  
ւորութեան Գեր. Իզլիրլեանց Սրբազան, Մեծ.  
Յովհաննէս Էֆէնտի Թարսեան, Վսեմ. Յով-  
հաննէս Էֆէնտի Նուրեան և Մեծ. Սինէրէրիմ  
Էֆէնտի Մանուկեան :

ՁԱՅՆԵՐ. — Շատ օրինաւոր է Գիւտնի  
առաջարկն :

Հետևաբար, ըստ առաջարկութեան Ատե-  
նապետ Էֆէնտիի՛ կազմեալ պատգամաւորու-  
թիւնն՝ առաջնորդութեամբ Գեր. Պատրիար-  
քական Տեղապահ Հօր, կը մեկնի յ'Երուտաղի-  
մատուն, և իբր քառսրդ ժամ յետոյ Ս. Պատ-  
րիարք Հայրն, առաջնորդութեամբ վերոյնշա-  
նակեալ պատգամաւորաց, կը մտնէ ի Ժողո-  
վանէն, ուր կընդունի զինքն Երեւոխոխա-  
նութիւնն յոտնկայս, և կը կանգնի իւր Նա-  
խազանական Աթոռոյն առաջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — ( Յտիկն կանգնել )  
Ամեն. Սրբազան Տէր. — Պատիւ անձին կը հա-  
մարիմ յոտնուս Ազգային Երեւոխոխանութեան ի  
պաշտօնէ արտօնայտել այն մեծ հատուցն և  
գոհունակութիւն որ պարգևեցիք Ազգին,  
բարեհաճելով ընդունել Պատրիարքական վա-  
սիուկ պայտօնք, զոր այս պահուս կը յօժարիք  
ստանձնել, հոմակերպելով Աստուածային կա-  
մայ և Ազգին բաղձանաց :

Գիտէք Երեւոխոխանութիւն թէ՛ սրպիսի  
կրճիմներով շրջապատեալ է Պատրիարքական  
պաշտուն, երբ միտրանեցաւ Ազգային Կեդր.  
Վարչութեան ղեկին Ձերք Բարձր Սրբաշնու-  
թեան յանձնելով : Ուստի տպահօղ է թէ իոյճն  
մտօք կատարեց իւր պարտականութիւնը, վստն  
զի անտարակոյս է թէ գտած է ի Ձեզ, որ-  
ժամաւոր յաջորդն Պատրիարքական Աթոռոյն,  
որոյ վրայ մերթ ընդ մերթ վայրած են Հայտա-  
տանեաց Ս. Եկեղեցւոյ պարծանք կողմ ազգա-  
սէր Երկիրպարտէք :

Ոչ որ ի մէջը կը տորտկուտի թէ Զեր Բարձր Արքայնութիւնն յանձն առնելով թողուլ այն անդորր կեանքը, որ փախաբաժ էր նուիրել Արքայ Յատրեանց վամուց, ազգային մի մեծ և կարևոր տան վիրաշինութեան, և ընդունելով կեզր Վարչութեան Նախագահութիւնն, ազգայնութեան ամենամեծ ազդոյցն կուտայ և անձնուիրութեան օրինակ կը հանդիսանայ :

Հետևաբար իրաւունք ունի Ազգային ժողովն յուսելով թէ՛ լիաձեւն սփոխութեամբ պիտի նպատակէր Ազգային Վարչական մեքենային կարևոր եղած ոյժն մատակարարելու, շնորհիւ այն խնատուն անաւութեան՝ որոյ սպայոցն սողեամբ ցոյց տուած էր զունական պարագայներու մէջ, Զեր Բարձր Արքայնութեան սղաչածնավարութեանց միջոցին :

Այժմ, մեր առատագուր Վոյսեր Սուլթանն Ալտիւր-Համիա Խանի արդարաբարութեան և Զերդ փորձեալ խոհականութեան, շրջապէսցութեան և լրջամտ ընթացից շնորհիւ աներկբայ է Ազգը թէ պիտի յաշնոյր օրոհպանել Բարեխնամ Կառավարութեան վտաճութեան յարտեսութիւնն, ի մասին հուսատարիմ հարտակութեան Ազգիս առ մեծագոր Գահն Օսմանեան կայսերոց, որոց հովանաւորութեան ներքև կը շարունակեն Հայք ի վարչոց անտի վայելել իրենց ազգային և եկեղեցական առանձնաշնորհմանց կիրառութեան ազատութիւնն :

Այս է ահա Ազգին յոյսը զոր կը ստածէ Արքայնագոյն Տեսաւը հետեւելու իմաստուն ընթացից վրայ, որով մեր եկեղեցական, Վանական, Կրթական և Բարեգործական հաստատութիւնք պիտի կարենան զարգանալ և բարգաւաճել :

Աւտի կարողութիւն և յաջողութիւն մաշթելով, որտիւ անձին կը համարիմ ներկայացնել Զեր Բարձր Արքայնութեան, այն զի կը, որով յանձն կառուութիւն Ազգային նաւն յՄիկիան արդի բարաբարիթութեան :

Չայս ասելով, Առենապետ Էֆէնտի, Սահմանադրութեան օրինագիրքն կը տանի և կը յանձնէ Նորին Բարձր Արքայնութեան, որ յտին եղնելով և երեան Ս. Աեղանին դարձուցած՝ կարտասանէ իւր Սահմանադրական Ուրարն, որ է՝

« Առաջի Աստուծոյ և ի ներկայութեան « Ազգային ժողովոյս հրատարակու ուխտեմ « հաւատարիմ մնալ Տէրութեան և Ազգիս և « ճշմարտասպէս հակել Ազգային Սահմանադրութեան անկերի զործադրութեամբ » : ( Տէս Սահմ. յոբ. 4րդ. ) :

Եւ ապա առնելով ի ձեռին՝ Գաւաղանն Պատրիարքական, խորին լուծեան մէջ խօսք կառուու :

ՊՏՏՐԻԱՐԲ ՍՐԱՍԱԶԱՍ. — Օսմանեան

Բարեխնամ Կառավարութեան հաստատեալ Սահմանադրութեան համաձայն՝ կը կատարեմ ահա իմ առաջին և զիսաւոր պարտականութիւնս, հնադանդելով Ազգային Երեսիխանան կան ժողովոյը որոշման և Վեհ. Սուլթանին հրամանին : Եւ կը ինդրեմ առնիւ Երեսիխանութեամբ կոչեցիք զիս Պատրիարքական ծանր պաշտօնին, այն լրջանութեամբ զոր ունիք Ազգային Սահմանադրութեանն, նոյնպէս և այսուհետեւ օգնէք ինձ յոգուտ և ի բարդաւաճումն Ազգին :

Ինձ յանձնուած պաշտօնի պարտականութիւնները պիտի կատարեմ այն անցելի սկզբունց համաձայն զորս Սահմանադրութիւնը կը սրտունակէ, հաւատարիմ մնալով միշտ, ինչպէս եղած եմ ամեն ժամանակ, Օսմանեան Պետութեան և Ազգիս, և ստահելով Հոյատասանաց Սուրբ և Ազգայնու եկեղեցուց դուտնութիւնն և աւանդութիւններն :

Ամենակարողն Աստուած օրհնէ մեր աննուտ ջանքերն, օրհնէ և սրահանէ իրր ըրական մեր Օշոտտարուս Վեհապետ Սուլթանն

Համիտ Բ. Կոյսրն , և անսասան սաՀէ զՆս  
 իւր Գահուն վրայ , որոյ շնորհիւ Աղբը կը վա-  
 յելէ այսօր իւր ներքին գործոց Վարչութիւնն ,  
 և Օսմանեան Գահուն Հայրական խնամքը դա-  
 րուց ի դարս անպակաս ընէ Ազգին վրայն :

Տացէ՛ Տէր երկար և խաղաղ կեանս հա-  
 մայն Հայ ազգին . օրհնէ՛ զՎեհ. Կոյսրն մեր , Իւր  
 լուսամտիտ նախարարուպետ Բարձր Սպետ Փա-  
 շա և Նորա զօրծակից Համայն նախարարաց  
 աշխատութիւններն :

**ԵՐԵՍՓՈՒԱՆԻ ՄԻԱԶԱՅՆ.** — Կեցցէ՛ Սու-  
 թան—Համիտ Խան : Կեցցէ՛ Յարութիւն Պատ-  
 իրաբ :

( Ս. Պատրիարք Հայրն իւր խօսքն վերջացը-  
 նելէ յետոյ , Եկեղեցական Երեսփոխանաց դասն  
 կերգէ « Ուրախ լիք Ս. Եկեղեցի » և « Յօգ-  
 ևնօքիւն ժամանեայ մեզ » Շարականն , որ կա-  
 արտի առ Աստուած ուղղել մաղթանքով մը ,  
 և որոյ կ'ունկնդրէ Երեսփոխանութիւնն յոտըն-  
 կայս և խորին երկիւղածութեամբ : — Ապա  
 Ս. Պատրիարք Հայրն « պաանպանիջ և Հայր մեր » ն  
 ըսելով կը բազմի իւր Պատրիարքական Աթո-  
 ոյն վրայ և կ'օրհնէ Երեսփոխանութիւնն որ  
 կարգաւ կը դիմէ Համբուրել Նորին Սրբազնու-  
 թեան աջն և շնորհաւորել իւր Պատրիարքա-  
 կան պաշտօնն : )

**Մ Ի Զ Ա Դ Է Պ**

Ժողովն Օրակարգի երրորդ խնդրոյն շանցած ,  
 Բաղարական ժողովոյ Վսեմ. Ատենապետ Մար-  
 տուտ Սիմօն Պէյ կարեւոր յայտարարութեան մը  
 Համար խօսք կը խնդրէ Դիւանէն :

**ՄԱՔՍՈՒՏ Ս. ՊԵՑ.** — (Ատենապետ Բար-  
 ժողովոյ) Գիտէ՛ արդէն Պատկ. Ժողովը թէ  
 ներկայ Բաղարական ժողովն ընտրուած էր՝ չս-  
 րունակելէ զիւր պաշտօնն ց'ընտրութիւն Նոր  
 Պատրիարքի : Արդ ուրախ եմք որ այսօր Պատ-

րիարքական ընտրութեան խնդիրն վերջացած  
 է և Հետեւաբար Քաղ. Ժողովն կուզայ իւր հրա-  
 ժարականն մասուցանել Պատկ. Ժողովոյդ և  
 խնդրել որ հաճի նորոգ ընտրութեան ձեռ-  
 նարկել :

Հարկ կը համարիմ նաև յայտարարել յա-  
 տենի ժողովոյդ , որ Ձեր Քաղ. Ժողովն այս օ-  
 րէն պիտի դադրեցնէ իւր նխտերն և Հետևա-  
 րար ժողովականք ս և է պատասխանատուու-  
 թեան ղառտ պիտի նկատեն ինքզինքնին : Ան-  
 տարակոյս չը պիտի մերժենք մեր անձնական  
 անկացութիւնն առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն ,  
 եթէ որ և իցէ խնդրոյ մը համար զվեղ հրա-  
 շիրէ անհատապէս , մինչև ցընտրութիւն մեր  
 յաջորդին :

**ՄԷԼԻԻՔԱՆ Մ. ԷՅ.** — Լսեցի Վսեմ. Սիմօն  
 Պէյ յի յայտարարութիւնն : Արդարև ես ևս լքրև  
 Երեսփոխան զխոսեմ թէ՛ արդի Բաղարական  
 ժողովոյ պաշտօնավարութեան օրինական շըր-  
 ջանն լրացած է , սակայն Հարկ կը համարիմ  
 զխոսել տալ թէ՛ ըստ Սահմանադրութեան տը-  
 րամադրութեան՝ պարտաւոր է նա շարունակել  
 զիւր պաշտօնն մինչ ց'ընտրութիւն իւր յաջոր-  
 դին Հետեւաբար սոյմէն ելնել այս եղանակաւ  
 հրաժարման խնդիր յարուցանել՝ զխոսիլն հա-  
 կառակ է օրինաց :

**ՊԵԿԱՆ Յ. ԷՅ.** — Կը ձայնակցիմ Մէ-  
 լիքեան էջինտրի :

**ՄԱՔՍՈՒՏ Ս. ՊԵՑ.** — Մէլիքեան էջէն-  
 տիի զխոսողութիւնն արդարև իրաւացի կրնայ  
 լինել , բայց և այնպէս սա կէտն ալ հարկ է նը-  
 կատողութեան անուլ թէ՛ Բաղարական ժո-  
 վովոյ պաշտօնավարութեան երկամեայ շըջանն  
 լրացած և Տ ամիսներ ալ անցած լինելով ,  
 Ինքն բացատրիկ պարագայից մէջ պաշտօն վա-  
 րած է՝ բացատրիկ կերպիւ և այժմ կարի հոգ-  
 նած է : Ըստ մեզ , Ս. Պատրիարք Հօր անջակ-  
 ցելու համար այն տեսակ Բաղ. Ժողով մ'ընտ-



րել հարկ է որ նոր շէքերով տաքորեալ լինի  
և ըստ արժանւոյն կարենայ կատարել իւր  
պաշտօնն :

**ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿ. —** Պատ. Քա-  
ղաքական Ժողովն երկու տարի ութ ամիս առ-  
գային ղէկն ի ձեռնն ունենալով գործեց, և այն  
պտիւտն յորում Ազգային Ժողովոյ օրինական  
չըջանն կը փակուի, կուգայ յայտարարել թէ  
ինքն ալ կը հրաժարի :

Գիտք արդէն թէ Ազգային Վարչութեան  
կողմանիերալութիւնն՝ ըստ օրինի՝ Ազգային Ժո-  
ղովոյ բացման առաջին նիստերուն մէջ կատա-  
րուելիք գործերէն մին է, որ տեղի պիտի ունե-  
նայ մէկ ամսէն : Ուստի ես ևս իրրև Երեւոյն  
իւր, կուգամ խնդրել նոցա ազգասիրութենէն  
որ հաճին շարունակել իրենց պաշտօնն մինչև  
ց'ընտրութիւն իրենց յաջորդին, որոյս ղի ա-  
ռաջի օրէն որ Թուրքիոյ Հայոց նոր Պատրի-  
արքն գործոց գլուխն կոնցնի, Վարչութեան  
մը տնայնական հրաժարմամբ՝ զժողովութիւնք  
զ'ծաղին իւր տակ :

( Զանազան նստարաններէ Երեւոյն  
կը ձայնակցին Իզմիրլեան Մ. Սրբազանի . )

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ —** Լսեցիք Մէլիքեան է-  
ֆէնտիի առաջարկն, զոր կրկնեցին Գեոր. Իզ-  
միրլեան Սրբազան և այլ բազում Երեւոյնսնք :  
Արդ, որոնք որ համախոս են Մէլիքեան  
էֆէնտիի սոյն առաջարկութեան, թող հաճին  
իրենց հաւանութիւնն յայտնել :

Հետևարար քուէարկութիւն պատարու-  
լով, Ժողովն միաձայնութեամբ կը ՆՅՆՈՒՆԻ  
Մէլիքեան Մ. էֆէնտիի կողմանէ ներկայաց-  
եալ առաջարկն, և ըստ այնմ ԿՈՐՈՇԷ որ Աշ-  
գային Վարչութեան Քաղաքական Ժողովն  
ըստ օրինի շարունակէ զիւր պաշտօն մինչ  
ց'ընտրութիւն իւր յաջորդին :

( Յէր Ի՞նչ Երեւոյն )

**ՄԱՔՍՈՒՏ Ս. ՊԷՑ. —** Ենորհակալ եմք  
Պատի. Ժողովոյք մատահութեան քուէէն, ա-  
կայն, ինչպէս պահ մ'առաջ ըսի, արդի Քաղ-  
ժողովն կարի հոգնած է, և հետևարար նոր  
Քաղ. Ժողովոյ մը անմիջական ընտրութիւնն  
կարևոր է, որ ընդ նախագահութեամբ Ս.  
Պատրիարք Հոր, Վարչական սեղանին վրայ  
կեցած կարգ մը խնդիրներն կարենայ կարգա-  
դրել և նոր զարկ մը տալ Վարչական մեքե-  
նային : Ուստի լուս կըլլայ, որ Պատի. Ժողովք  
յառաջ բան դիտակնն ներկայ չըջանի, վեր-  
ջին անգամ մ'ալ գումարի նոր Քաղաքական  
Ժողովոյ մը ընտրութեան ձեռնարկելու համար :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. —** Ժողովն իւր միահա-  
մուտ քուէովն որոշեց որ Քաղ. Ժողովն, ըստ  
տրամադրութեան Ազգային Սահմանադրութեան  
փոքր մի ևս շարունակէ զիւր պաշտօն, մինչ  
ց'ընտրութիւն իւր յաջորդին :

Հետևարար Պատ. Քաղ. Ժողովոյք կը մնայ  
հպատակիլ Ազգային օրինաց :

Այս, Ատենապետ էֆէնտի յայտարարե-  
լով թէ սոյն միջադէպն փակուած է, ձեռք  
կառնու Որակարգի երրորդ խնդիրն :

Գ.

Փակումն Ազգային Ժողովոյ շրջանի 1884 ամի :

**ՏԵՍՐԲ. —** Զարմանալի զուգահեռու-  
թեամբ մը Ժողովոյ նստաչըջանի փա-  
կումն այս օրուան կը պատահի, յորում  
առաջին անգամ կը նախագահէ մեր նո-  
րընտիր Սրբազան Պատրիարք Հայրն :

Սակայն այս զուգադիպութիւնն իւր օգտակար կողմն ունի, այն է ներկայացընել Նորին Սրբազնութեան Ժողովոյս փամեայ դործառնութեանց անդեկագիրն:

Նախ եւ յառաջ պարտմբ յիշատակել թէ ազգային Վարչութեան կրօնական և Քաղաքական Ժողովները ներկայ շրջանին մէջ ջանագիր եղած են իրենց պաշտօնավարութիւնն ամենայն հաւատարմութեամբ շարունակել, պահպանելով ազգային շահերն, նմանապէս դուրսի ի ստանդեմբ աշխատակցած են ի նոցանէ ընտրեալ զմանազան Խորհուրդք եւ Հոգաբարձութիւնք, ինչպէս նաեւ ազգային կրթական եւ բարեգործական հաստատութեանց Խնամակալութիւնք, ըստ մեծի մասին կատարել ինչ որ հնարին է իրենց շրջանակին մէջ:

Իսկ Ազգային Ժողովոյս դործառնութեանց համարատուութիւնն, սր իւր մէջ կը կատարուի փակման պահուն, հետեւեալ համառօտ անտութեամբ յերեւան կ'ածէ իւր աշխատութեանց պատկերը:

Ընդ ամենը 62 խնդիրք ներկայացած են Ժողովոյս, որք հետեւեալ վիճակն ստացած են.

- 49 խնդիրք աւարտեալ
- 9 » յղեալ առ Չեռնհաս Դիւանս
- 2 » օրակարգի նշանակեալ
- 2 » օրագրեալ

Համադուամբ 62 խնդիրք. Սոցա մէջ կը գտնուին նախորդ շրջանէն անըյծ մնացած խնդրոց 6ն ևս, զորս ամբողջապէս աւարտեց:

Պէտք է խոստովանիմք թէ ներկայ նոտաշրջանս կարի արդիւնաւոր եղած է, Ազգին համար մեծ կորեւորութիւն ունեցող մէկ քանի գլխաւոր խնդրոց լուծ-

մամբը, որոց մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի են.

Ա. — Պատրիարքական ընտրութեան խնդիրն, որ ինչպէս յայտնի է 'ի մեծ գոհունակութիւն ազգին լուծուած է, ընտրութեամբ Ամեն Տեառն Վեհապետեան Թարութիւն Սրբազանի:

Բ. — Արարատեան-Սայր Աթոռոյ Գահակալին ընտրութեան մասնակցութեան խնդիրն, որոյ մասին Ժողովս որոշած է հետեւել նախորդ ամի եզանակին, եւ իւր Ատենապետաց Դիւանին յանձնարարած է լիազօր իրաւասութեամբ:

1. Պատուիրակութեան եզանակը սահմանել.

2. Ի հարկին Կ. Պօլսէն պատուիրակուղարկել.

3. Պատուիրակաց հրահանգը պատրաստել

որ ըստ սոյն յանձնարարութեան որոշեց պատուիրակութեան պաշտօնն այս տարի եւս Ամեն Մակար Սրբազանի յանձնել, քանի որ սոյն ընտրութեան խնդրոյն մէջ Ժողովք որոշած էր ըստ նախորդ ամի դրութեան վարուել, Հարկ չի տեսաւ ուրեմն նախորդ տարոյ պատուիրակին փոփոխութիւնը, նա մանաւանդ Պօլսէն մասնաւոր պատուիրակաց առաքումն այս տարի բնաւ օգտակար չի դատեց իրաց յաջողութեան համար ըստ բազմանաց ազգին:

Սակայն նկատելով թէ մի գուցէ Ամեն Մակար Սրբազան Ընտրողական Ժողովոյ գումարման պահուն չկարենայ անձամբ ներկայ գտնուիլ ի Ս. Աթոռն, յորմէ հեռացած է բոււական ժամանակէ ի վեր, և որով Թուրքիոյ Հայոց

մասնակցութեան իրաւունքն ալ չկարենայ ի գործ դրուիլ կամ փոստաբանուիլ, առ ի չդոյէ պաշտօնական ներկայացուցչի, Չեր Ատենապետաց Դիւանը պատշաճ դատեց ժողովոյս պաշտօնագիրը փոխանակ թղթատարով ուղղելու, յատուկ պաշտօնակալի մը ձեռամբ ուղարկել ի Ս. Էջմիածին: Եւ յանձնարարեց նմա որ եթէ ի պահուն ընտրութեան, Մակար Սրբազան բացակայ ըլլայ, Ընտրողական ժողովոյ նախագահին յանձնէ Ազգ. ժողովոյս պաշտօնագիրն որ Տաճկաստանի Հայոց մասնակցութեան եղանակը կը պարզէ: Այս պաշտօնն, ինչպէս գիտէք, յանձնած է Հոգեւորհայր Տ. Յովհաննէս Մկրեան Աւագ քահանային, հրահանգ ունենալով հաղորդել առ Պատուիրակն մեր ինչպէս նաեւ առ Ս. Սինդն կաթողիկոսական ընտրութեան խնդրոյն նկատմամբ աստ ի Պոլիս տեղի ունեցած քննադատութեանց եւ վիճարանութեանց մասին հարկ եղած տեղեկութիւններն, ի լուստւորութիւն դադար վարաց եւ յօգուտ մարտնոցս իրաւանց պահպանութեան:

Ահա պատճէնն ժողովոյս պաշտօնագրին.

**Ամենապատիւ**

Տէր . . . Սրբազան Արքեպիսկոպոս.

Արժանընտիր Տեղակալ և Նախագահ Համազգային Ընտրողական ժողովոյ կաթողիկոսութեան ամենայն Հայոց Արարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի,  
 Ի Վ.Ա.Ղ.ԱՐՇԱՊԱՏ

Ազգային Երեսփոխանական ժողովն Հայոց Թուրքիոյ գումարեցաւ յառաջ.

նում աւուր Մարտ ամսոյ ի Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ղալաթիոյ վասն մասնակցութեան յընտրութիւն կաթողիկոսին ամենայն Հայոց, ըստ տրամադրութեան Ազգ. Մահմանադրութեան, ժողովն յետ խորհրդակցութեանց եւ քննութեան պարագայից իրացն, որոշեաց յայս նուագ եւս կատարել զմասնակցութիւն Հայոց Տաճկաստանի, ըստ եղանակին բայցարեւոյ ի տեղեկագրին, որ 16 Ապրիլի 1884 ամի, ստորագրեալ յերջանկալյատակ Պատրիարքէն Ներսիսէ, եւ ուղղեալ առ Ամեն. Տեղակալն կաթողիկոսութեան ամենայն Հայոց. առ Գեր. Խորհրդական անդամն Սրբոյ Սինդն, եւ առ Համազգային Ընտրողական ժողովն, զորոյ զպատճէնն կցեմք ընդամին:

Ժողովն ի նկատ առեալ զի առեւանկան գործողութիւնք, որք կատարեցան յանցելումն ամի, վասն կաղմութեան ցանկի ընտրելեաց, ունին եւ պահն զհանդաման օրինաւորութեան եւ վասն այժմու ընտրութեան, բայց միայն զի թերացեալ գաւանէր եռանուն ցանկն որբալի վախճանմամբ ազգասէր Հայրապետին Ներսիսի, արժան դատեցաւ յաւելուլ ի նմա դանուն յաջորդին, որոյ ստացեալ էր յետ երկը ընտրելեայն, զառաւելագոյն թիւ, ի բուէարկութեան Ազգային ժողովոյ:

Ըստ այսմ, տհա փութմամբ առաջի առնել Համազգային Ընտրողական Պատկ. ժողովոյ Մայր Աթոռոյք, զցանկ երկը ընտրելեաց Հայոց Տաճկաստանի հանդերձ թուով քուէիցն, որք են. Ա. Ամենապատիւ Տ. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոս Խրիմեան, Նախկին Պատրիարք Կ. Պօլսոյ քուէ 50

Բ. Գեր. Տ. Մերձխեղեկ Սրբազան  
Եպիսկոպոս Մուրատեան Առաջն. Զմիւռ.  
նիոյ վիճակին քուէ 42

Գ. Գեր. Տ. Խորէն Սրբազան Եպիս-  
կոպոս Ալքքեան . Հայր Վանուցն Արմա-  
շու քուէ 48

Արդ , փութամբ թղթովս այսուիկ  
յանձն առնել Բարձր Սրբաշնութեան  
Զերում զպաշտօն պատուիրակութեան  
Հայոց Թուրքիոյ , խնդրելով զի հաճես-  
ցիք ընթեռնուլ զայս Պաշտօնական  
թուղթ մեր յատենի Համազգական Ընտ-  
րողական Պատկ. Ժողովոյն , ներկայացու-  
ցանել նմա զայստօիկ ղերիս ընտրելիս  
յանուն համօրէն վիճակացն Հայոց որ  
ընդ հովանեաւ Օսմանեան Պետութեան ,  
եւ ըստ եղանակի նշանակելոյ ի տեղեկա-  
գրին անցելոյ ամի : բարգել ի քուէսյան  
մեր զգուժար քուէից Պատկ. Ժողովոյդ  
որպէս զի Եպիսկոպոսն որ ստասցի զա-  
ռաւելագոյն թիւ ձայնիցն , հուշակեցի  
կաթողիկոս Ամենայն Հայոց , ըստ նախ-  
նաւանդ ծիսից եւ օրինաց Հայաստան-  
եայց Ս. Եկեղեցւոյ :

Ամենապատիւ Սրբազան Հայր , հա-  
ղորդելով զայստօիկ որոշումս Ազգ. Ընդ-  
հանուր Ժողովոյ , քաջայոյս եմք զի հան-  
րածանօթ իմաստութեամբ եւ շրջհայ-  
եաց հեռատեսութեամբ Զերով , եւ Գեր.  
Սինօդականաց , եւ Մեծ. Ատենակալ  
Պատդամաւորաց Ընտրողական բարձր  
Ժողովոյն , ունիր ի յանդ հանել յօգուտ  
եւ ի շինութիւն Հայաստանեայց Ս. Եկե-  
ղեցւոյ , զընտրութիւն արժանաւորադոյն  
Գահակալի , յԱթու Սրբազան Առաքե-  
լոյն մերոց Թաղէի եւ Բարթողիմիայ ,  
եւ Առաքելասարաս Հօրն մերոյ Սրբոյն  
Գրիգորի Լուսաւորչին :

Ակն ունելով ի շնորհաց ամենազօր  
Հոգւոյն Սրբոյ ելից ընտրութեանս ի  
պահպանութիւն անբաժանելի միութեան  
Համազգային կաթողիկէ Եկեղեցւոյ մերոյ  
Սրբոյ , մեծաւ փափաքանօք սպասեմք  
աւետաւոր տեղեկագրի Զերում , եւ

Մնամք

Ամենապատուութեան Զերում

Աղօթարար ի Տէր

Պատրիարքական Տեղապահ

Գեորգ Ծ. Վարդ. Ռուսնուգլեան

ի գիմաց Ազգ. Ժողովոյ

Ատենազպիր Ատենապետ

Յ. Պօլնակեան

Տ. Եռսուփեան

30 Մարտ 1885

Կ. Պօլիս

Մաղթեմք ուրեմն որ Արարատեան  
Մայր Աթոռն եւս նման Պօլսոյ Պատրի-  
արքական Աթոռոյն իւր արժանաւոր  
գահակալն ունենայ :

Գ.— Ժողովոյս որոշած ամենակա-  
րեւոր խնդիրներէն մին է Երուսաղիմայ  
պարտուց բարձման խնդիրն :

Ժողովս լսելով Ազգ. Վարչութեան  
տեղեկագրին շրջհայեաց տեսութիւն-  
քըն , կ'ընդունի Վարչական առաջարկն ,  
որ էր զինուորական տրոց յաւելման մա-  
սին կայսերական հրովարտակին անմի-  
ջական դորձադրութեան փոյթ տանիլ ,  
պայմանաւ որ արդար բաշխում մը ըլլայ  
նաեւ Պօլսեցւոց համար եւ իրենց բաժ-  
նին վճարումն եւ պարտաւորիչ ըլլայ  
նման գաւառացւոց :

Գ.— Ազգ. Կեդրոնական Երմուացոյցի  
քուէարկութիւնն :

Ե.— Խորհրդարանական յանձնաժո-  
ղովի մը կարգումն , պաշտօնն ունենալով  
պատրաստել

1. — Յառաջիկայ Սահմանադրական տարւոյն համար ելմտացոյց մը խորհրդակցութեամբ ընդ Ազգ. վարչութեան.

2. — Ազգ. կրօնական և կրթական պիտոյից գոհացում տալու համար յարմար դուժարներ սահմանել .

3. — Քննել արոց կանոնադրին անգործադրելիութեան պատճառներն .

4. — Ազգ. կեդր. սնտուկի անուղղակի հասոյթներն անճեցնելու միջոցները դանել և տեղեկագրել .

Սոյն Յանձնաժողովն կրնամ, զՁեզ ապահովել թէ ամենայն ժրջանութեամբ կ'աշխատի ի դուրս հանել իրեն յանձնուած պաշտօնն , և կը յուսամ թէ զիւրազործադրելի եղանակ մը պիտի գտնէ վարչական գործոց բարուըման մասին անհրաժեշտ եղած սոյն կենսական խնդրոյն կարգադրութիւնը .

2. — Առաջնորդական ընտրութեանց իրաւասութեան խնդիր .

Ժողովս յանձնարարած է վարչութեան , ներկայել ցուցակն այն դաւառաց յորս ժողովուրդն անկարող է Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն ընտրել իւր Առաջնորդն . բացատրել իրենց անկարողութեան պատճառները , զորս Ազգ. Ժողովն լսելէ յետոյ կրնայ արտօնել զվարչութիւնն որ ինքն կարգէ նոյն վիճակաց մէջ զանուող դաւառաց առաջնորդներն .

Առասիկ այս վնց կարելոր խնդիրներն , որոց իւրաքանչիւրն ժողովոյս յաջորդարար մէկ քանի նիստերն զբաւեցին , վերջապէս իրենց լուծումն ստացած են օրինաւորութեան ստհմանին մէջ .

Երկար կ'ըլլայ եւ անօգուտ մի ըստ միովէ յիշոտակել ներկայեալ միւս խըն.

դիրներն , որք կը պատականին Երեսփոխանական ընտրութեանց , հարցմանց կամ հարցապնդմանց եւ խել մը օրինական գործողութեանց .

Միայն թէ կարելոր կը համարիմ հետեւեալ վիճակադրական տեղեկութիւնն հաղորդել , որ ժողովոյս գործունէութեան աստիճանն կրնայ ապացուցանել : բարդատմամբ նախորդ չրջանին .

Այսօր ժողովոյս տարեջրջանին քըսաներորդ նիստը տեղի կ'ունենայ , Սոյն քսան նստից մէջ ժողովին ներկայ գըտնուող Երեսփոխանաց թիւն հետեւեալն է .

3 նստի մէջ	80	58	Երեսփ. ներկայ գտնուած են :
2»	»	61 » 52	»
10»	»	50 » 58	»
4»	»	40 » 48	»
1»	»	38	»

20

Արդ , եթէ 105 ընտրեալ Երեսփոխանաց մէջէն հիւանդութեան , ճանապարհորդութեան , վերջապէս բանաւոր պատճառաւ բացակայից հաշիւն ընեմք , կարծեմ թէ չպիտի կարենամք բսել թէ Երեսփոխանք անտարբեր դատուած են իրենց պաշտօնավարութեան մէջ : Յայտնի կերեւնայ թէ մեծամասնութիւնն կատարած է իւր պարտականութիւնը . ուստի մեծ դոհունակութեան առթի մ'է այս , և առհասարակաց յաջորդ չրջանի առաւելութեան :

Արդ , Տեաւք Երեսփոխանք , ինչպէս Քաղ. Ժողովոյ վաւեմ : Ատենապետն յայտարարեց պահ մ'առաջ , վարչական մեքենային բարւօք ընթացքին համար զանազան բարեկարգութեանց պէտքն անհրաժեշտ է .

Եկէ՛ք ուրեմն յառաջ քան փակելոյ մեր Սահմանադրական նստաշրջանը, կըրկին անդամ յոսնկայս յայանեմք մեր երախտագիտութիւնն առ Օգոստ. Վեհապետան մեր Սուլթան Ապտիւլ Համիտ Խան, որոյ փառաւոր հովանւոյն ներքեւ կը վայելեմք մեր աղբային եւ եկեղեցական առանձնաշնորհմանց գործադրութիւնն : Եւ որովհետեւ Ամեն Ս. Պատրիարք Հօր ուխտին լուեւեայն մասնակցեցանք, խօստանամք մեր աջակցութիւնն եւ պատրաստակամութիւնն՝ լրջօրէն նկատողութեան առնելու համար այն ամենայն բարեկարգական ծրագիրներն՝ որք Սահմանադրական սկզբանց հաւատարիմ մնալով հանդերձ, փորձառութեան յոյց տուած հանդամանօք ներկայանալով անմիջական գործադրութեան կը կարօտին :

Վերջացնելով ուրեմն, Տեաւրք, Ազգային ժողովոյս 1884 ամի սահմանադրական նստաշրջանն փակուած կը յայտարարեմ :

Ատենապետ Էֆէնտիխ սոյն փակման ճառէն յետոյ, ժողովն, առաջարկութեամբ Գուրգէն Յ. Էֆէնտիխ, շնորհակալութիւն կը յայտնէ նախ առ իւր Մայր-Դիւանն, և ապա առ կըրօնական և Քաղ. ժողովն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յանուն իմ պաշտօնակցացոյ, կը փութամ շնորհակալութիւն յայտնել ժողովոց կողմանէ Դիւանիս ցոյց տրուած վատահոյսեան ցոյցերէն : Այլ սակայն կը փութամ իւր արդարութեան պարտք յայտարարել թէ՛ Դիւանս իւր պարտականութեան անթերի կատարման մասին որչափ տրամադրու սր ըլլար, իւր ջանքերն ապրողին պիտի ըլլային, եթէ իրեն զօրովից չունենար Երեսիտ խանութեանդ աջակցութիւնն : Ուրեմն թոյլ տուք Տեաւրք, առ Ձեզ վերադարձնել Դիւանիս ուղղեալ շնորհակալութիւններն :

Իսկ մասնաւոր շնորհակալութիւն կը պարտիմք առ Գեր. Պատրիարքական Տեղապահ Հայրն, որ Պատրիարքական Աթոռոյն թափուր մնացած ժամանակամիջոցին մէջ, կարող եղու ամենայն խոհեմութեամբ, շրջահայեցողութեամբ, և խղճի մտօք կատարել իրեն յանձնուած փափուկ պաշտօնն ի մեծ զօնուակութիւն համայն Ազգին :

( Երեսիտանք ձեռնածից հաւանութեամբ կը ձայնակցին Ատենապետ Էֆ.ի սոյն յայտարարութեան և Տեղապահ Հայրն յոտին կանգնելով փոխողործ շնորհակալութիւն կը յայտնէ իւր նկատմամբ արտօյայտեալ համակրական ցոյցերուն համար :

Ատենան կը վերնայ ժամ Յին, որչնութեամբ Ս. Նախագահ Հօր :

Ատենազպիր  
Յ. ՊՕՏԵԱԿԵԱՆ

Ատենապետ  
Տ. ԵՌՈՒՈՒՅԵԱՆ

# Ն Ի Ս Տ Ի .

17 ԱՊՐԻԼ 1885

## ԱՋԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵՂԵՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ  
ԵՎԵՂԵՍԱՆՔ

### Ա. Վ. իճակ

- 1 Սիմէօն Եպո. Սէֆէրեան
- 2 Կարապետ Վ. Բաղրատունի
- 3 Վահան Վրդ. Տ. Մինասեան
- 4 Կարապետ Քահ. Սէթեան

### Բ. Վ. իճակ

- 5 Խորէն Արքեպ. Նար. Պէյ
- 6 Մատթէոս Եպո. Իղմիրեան
- 7 Յովհաննէս Քահ. Մկրեան Բ Պ
- 8 Գրիգոր » Աճէմեան

### Գ. Վ. իճակ

- 9 Յակոբ Վ. Ա. Փախաղեան
- 10 Խորէն Քահ. Փէշիկեանեան
- 11 Ոսկի Քահ. Օնանեան
- 12

### Դ. Վ. իճակ

- 13 Եղիշէ » Այվաղեան
- 14 Յովհաննէս Վ. Սըշարունի
- 15 Սահակ Քահ. Տ. Սարգսեան
- 16

### Ե. Վ. իճակ

- 17 Յովսէփ Վարդ. Այվաղեան
- 18 Գարեգին » Թաթարեան
- 19 Սուքիաս Քահ. Ստեփանեան
- 20 Գարրիէլ » Խանճեան

- Բ Բացակայութիւն առաջին :
- Ղ » Երկրորդ :
- Պ » բանաւոր պատճառաւ :

ՅԵՐԵՎԱՆԻ  
Ա. Վ. իճակ

ԳՌԱՎ-ԳԱՐՈՒ, ԿԵՒԻԼԻ-ՎՈՂՎԱ,  
ԵՎ ԳՌԱՎ-ԳԱՐՈՒՆԻ ԴՈՒՐԱ

- 21 Գրիգոր Պէրպէրեան
- 22 Կարապետ Աղարդմաճեան Բ
- 23 Բարթող Բիւրճիպաշեան
- 24 Յ. Մէրեէմ-Գուլի
- 25 Տիգրան Հեւրեարպէլէնտ.
- 26 Աւետիս Սուրէնեան Բ Պ
- 27 Տօքթ. Այվաղեան
- 28 Գէորդ Այվաղեան Բ Պ
- 29 Յակոբ Եղմէնիճեան Բ 3
- 30 Յակոբ Գուրգէն
- 31 Խաչիկ Կամարական
- 32 Միհրան Ինճեան
- 33 Մարտիրոս Էքսէրճեան Բ 3
- 34 Մանուէլ Պէշիրեան
- 35
- 36
- 37

Բ. Վ. իճակ  
Պէշիկբաշ

- 38 Բարսեղ Հայաճեան
- 39 Յովհաննէս Քէրէստէճեան Բ
- 40 Մելքոն Պարոնիկեան
- ԵԵՐԻ-ԳԱՐՈՒ
- 41 Մարուգէ Փրէնիկեան Բ Պ
- 42 Պօղոս Էնքսէրճեան
- 43 Յակոբ Պօշնակեան
- 44

ԵՍԻԽԻՍՏԱՐ Ա. ԽԱՋ

- 45 Սիմէօն Ֆէլէկեան
- 46 Գարրիէլ Նորատունկեան

47 Գասպար Գասպարեան  
48

ԵՍԻԽԻՍՏԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՏ

- 49 Պօղոս Թորգոմեան
- 50 Տրդատ Փափաղեան
- 51 Յակոբ Հաճեան Բ 2
- 52

Գ. Վ. իճակ

ԳՈՍՏՐԻ-ԲԱՂՎԱ

- 53 Գասպար Զեքաշ Բերա
- 54 Գրիգոր Մէլլիպիճեան
- 55 Ղազար Հովուեան
- 56 Յարութիւն Պէլիեան
- 57 Նշան Պոպաճեան Բ Պ
- 58 Վիշէն Օրմանեան
- 59 Սինքերիմ Մանուկեան
- 60 Համբարձում Մաղպուլե.
- 61 Մանուկ Ապանեան Բ Պ
- 62

ՄԻՋԱԿԻՊ

- 63 Տիգրան Եւուսփեան
- 64 Մկրտիչ Գազանճեան
- 65 Մկրտիչ Շանթեան Բ 2
- 66 Ստեփան Տամառեան
- 67

ՊԵՂՈՍ ԵՎ ՂԱՍՊԱՐԻՍ

- 68 Միշայէլ Մամիկոնեան

Գ. Վ. իճակ

ՔՈՒՂԻՍԵՆՈՒՅ ԵՎ ԻՃԱՎԻՆ

- 69 Մկրտիչ Մէգորբեան
- 70 Սինոն Մաքսուսեան

Գատըգիւղ

71 Գառնիկ Յովակիմեան

72 Կարապետ Հազարեան

Նարիբ-Գաբու

73 Միհրան Տէօբէճեան  
Եհնի-Մանայի Սամարիոյ

74 Թօփ-Գափու

75 Էյուպ Ս. Եղիա Ե. Ս.  
Աստուածածին

76 Գուրու-Չեղմե

77 Կարապետ Սեփանեան  
Հիսար Ե. Պօյանի-Գիւղ

78 Նոր-Գիւղ Ե. Սթեփիա

79 Պալատ

80 Մկրտիչ Կիւմրուչեան

